ՁԻԱՎՈՐ ՍՐԲԵՐԻ ԳԱՆՁԱՐԱՆԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

Հայոց եկեղեցու Տոնացույցում և ժողովրդական պաշտամունքում առանձնակի տեղ է գրավում սրբերի մի խումբ, որն ընդունված է անվանել ձիավոր ու զինավոր սրբեր, որոնք հինգն են և բոլորն էլ բյուզանդական ծագմամբ: Այս սրբերից Սուրբ Սարգիսը լիովին ազգային բնույթ է ստացել և ամբողջապես ընկալվում է որպես հայոց ամենահաս ու արագահաս պահապան: Սուրբ Գևորգի պաշտամունքը տարածված է քրիստոնեական բոլոր ժողովուրդների մեջ՝ արևելյան քրիստոնեական միջավայրից մինչև Անգլիայի ափերը: Մյուս երեք սրբերը թեև ոչ այնքան տարածված, սակայն դարձյալ ունեն շեշտված չարխափան և օգնության հասնելու գործառույթներ:

Այս սրբերի գանձարանային կանոնների հաջորդականությունը ևս համընկնում է եկեղեցական Տոնացույցի ընթացքին: Ըստ այսմ՝ Հայոց եկեղեցին առաջինը տոնում է Ս. Սարգսի հիշատակը և համանման ձևով հիշյալ սրբերից առաջինը նրան է հիշվում և տոնացուցային ընթացքին համահունչ ձևով նրա տոնը կատարվում է Բուն Բարեկենդանից առաջ: Ինչպես որ Ս. Սարգսի տոնին նախորդում է Առաջավորաց պահքը, վերջինիս ուրբաթ օրը կատարվող Հովնան մարգարեի հիշատակով, այնպես էլ Գանձարաններում Ս. Սարգսի տոնին նախորդում է Առաջավորաց պահքի կանոնը՝ Հովնան մարգարեի հիշատակմամբ:

Գէորգ *բառը հունարեն է՝ Gewrgioc և նշանակում է հողագործ ու կազմված է gh՝ «երկիր, հող» և ergon գործ բառերից*[1]*: Ս. Գևորգի վկայաբանության մեջ ևս ասվում է. «Գէորգիոս, որ թարգմանի հողագործ»*[2]*: Նրա անվան այս կազմությունը, ինչպես նաև պատմությունն ու ժողովրդական հավատալիքները հուշում են, որ նախաքրիստոնեական շրջանում նա ներկայացրել է անասնապահության և երկրագործության պաշտամունքը, ապա, քրիստոնեությունից հետո կապվելով Դիոկղետիանոսի ժամանակ նահատակված համանուն սրբի հետ, վերջինիս անվամբ շարունակել է հանդես գալ որպես անասնապահության ու երկրագործության պահապան: Նույն այս պատճառով է, որ մյուս եկեղեցիները նրա հիշատակը կատարում են գարնանը, երբ անասուններին հանում են դաշտերը ու սկսվում է երկրագործական աշխատանքների տարին: Մեր եկեղեցին թեև Ս. Գևորգի հիշատակը կատարում է սեպտեմբերին, սակայն «Հայսմավուրքում» նրա տոնը դրված է ապրիլի 23 -ին, ինչպես մյուս եկեղեցիներում է:*

---

[1] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 454:*

[2] *Յայսմաւուրք, գիրք Ա, Կ. Պոլիս, 1834, էջ 180, տե՛ս նաև Հ. Յ. Տ ա շ ե ա ն. Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 41, 84, 582:*

Այս տոնի ապրիլի փոխարեն սեպտեմբերին կատարելը ևս պատահական չէ: Երբ համեմատում ենք Ս. Սարգսի և Ս. Գևորգի ժողովրդական պաշտամունքը, մի շարք ընդհանրություններ ենք գտնում: Նրանք երկուսն էլ մի շարք աղոթքներում իրար հետևից են հիշվում: Երկուսն էլ ձիավոր սրբեր են ու շատ դեպքերում թե՛ նույն գործառույթներն ունեն, թե՛ այդ գործառույթները երբեմն շփոթվում և մեկը մյուսին են վերագրվում:

Բանասիրության մեջ հստակորեն ցույց է տրված, որ Ս. Սարգսի տոնը նախորդում է և նվիրված է երկրագործական տարվա սկզբին և հատկապես հացահատիկային բույսերին, ըստ այսմ Ս. Սարգսի տոնի սրբազան կերակուրն է ու նրա պահքը լուծվում է նույն հացահատիկից պատրաստված փոխինձով[3]*: Ս. Սարգիսը նաև ընտանի կենդանիների պահապանն է և գայլկապի աղոթքներում, ինչպես կտեսնենք, հիշվում է որպես մարդկանց ու կենդանիների պահապան, այս համատեքստում հիշվելով և Ս. Գևորգի կողքին:*

Այս բոլոր փաստերի համադրմամբ՝ վստահաբար կարելի է ենթադրել, որ սկսվող գյուղատնտեսական աշխատանքներին նվիրված Ս. Գևորգի տոնի փոխարեն մեր եկեղեցին շարունակել է նշել տեղական ամուր ավանդույթներ ունեցող այն տոնը, որը համարժեք է եղել Առաջավորացի նախաքրիստոնեական տարբերակին, իսկ Ս. Գևորգի տոնը փոխադրվել է սեպտեմբերի վերջ, երբ ավարտվում է բերքահավաքը, որով Ս. Սարգսի տոնով սկսվում և Ս. Գևորգի տոնով ավարտվում է երկրագործական տարին:

Ս. Գևորգի այս հողագործ անվանմանը հոգևոր մի խորհուրդ է հաղորդվել, քանի որ միջնադարյան խորհրդաբանությամբ հերկելն ընկալվել է նաև որպես մարդկային հոգիների հերկում: Այս միտքն է շեշտվում Ս. Գևորգին նվիրված և, «Շարակնոցի» կանոնում զետեղված չլինելու պատճառով, Ս. Ամատունու կողմից անվավեր շարականների հատորում հրատարակված հետևյալ տողերում.

Արժանաւոր վարձուց բարեաց ժիր երկրագործ անյետահայեաց,
Աշխատասիրեալ այգի աշխարհի Սուրբըդ Գէորգ, քրտնաջան մշակ [4]:

Ս. Սարգսին և Ս. Գևորգին բնորոշ տիպաբանական մի շարք հատկանիշներ ունեն և Ս. Թեոդորոսը, Ս. Մերկերիոսը և Ս. Մինասը: Նրանցից Ս. Թեոդորոսի հիշատակն ընդհանրական եկեղեցին, այդ թվում և Հայոց, նշում է Մեծ Պահքի առաջին շաբաթվա շաբաթ օրը: Տոնացուցային այս ընթացքին համապատասխան, Գանձարանում նրա կանոնն անմիջապես հաջորդում է Բուն Բարեկենդանին, քանի որ վերջինիս հաջորդում է Մեծ Պահքի առաջին շաբաթը: Նրա հիշատակն այդ օրը կատարելը պայմանավորված է այս նահատակի վկայաբանության հետևյալ պատմությամբ: Ասվում է, որ նա քրիստոնյա ծնողների զավակ էր ու նահատակվել է Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի օրոք: Մոր

---

[3] *Այս մասին տե՛ս Ն. Ադոնց. Հին հայոց աշխարհայացքը.– Պատմագիտական ուսումնասիրություններ, Փարիզ, 1940, էջ 289–291:*

[4] *Սահակ վրդ. Ամատունի. Հին և նոր պարականոն կամ անվավեր շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ 47:*

մահից հետո հայրը «սնոյց զնա խարշեալ հատիւ ցորենոյ և հատաջրով»: Այնուհետև հասնելով «յարբունս հասակի, Սուրբն Թէոդորոս զնոյն ցորենահատ սիրեալ և այնու շատացեալ, այլ ինչ ոչ ուտէր»[5]: Ցորենի հատիկով սնվելու այս պատմությունը նրա անունը արդեն իսկ կապում է Մեծ Պահքի հետ, սակայն, ինչպես կտեսնենք, միայն այդ պատճառով չէ, որ նրա հիշատակը կատարվում է պահոց շրջանում:

Լինելով բարեկազմ և ուժեղ՝ երիտասարդական տարիքին է հասնում, ցանկանում են զինվոր դարձնել, սակայն նա հրաժարվում է՝ ասելով, որ ինքը երկնային թագավորի զինվոր է:

Մի անգամ ձի հեծած մի մարգագետնի մոտով է անցնում և որոշում է այդտեղ հանգստանալ: Երբ իջնում է ձիուց, մոտակա տան այրի տանտիրուհին ձայն է տալիս. «Այ հեծեալ, այ հեծեալ, մի կալ մնալ ի տեղիդ յայդ, զի մերձ է որջ վիշապ մեծի հզօրի»: Այդ ժամանակ երևում է վիշապը և հարձակվում նրա վրա. «Յայնժամ սուրբն Թէոդորոս կնքեալ զինքն նշանաւ Սրբոյ Խաչին, եհար նիզակաւն զգլուխ վիշապին, և ճեղքեալ առ ժամայն սատակեցաւ վիշապն»[6]:

Այս դրվագը որոշակի ընդհանրություն է գծում Ս. Գևորգի և Ս. Թեոդորոսի միջև: Ս. Գևորգի վկայաբանության հայկական խմբագրության մեջ չի հիշվում նրա գլխավոր քաջագործությունը՝ վիշապին սպանելն ու աղջկան ազատելը: Ս. Թեոդորոսի երկրային կյանքի ամենանշանակալից իրադարձությունը վիշապին սպանելն է, և այս դրվագում իրավիճակային մի ընդհանրություն կա Ս. Գևորգի հետ: Վերջինս իր նշանավոր հրաշքը՝ չորացած սյան կանաչեցնելը կատարում է այրի տանտիրուհու տանը, և նույն ձևով այրի տանտիրուհին է Ս. Թեոդորոսին զգուշացնում վիշապի մասին: Այս դրվագը նաև պատկերագրական մի ընդհանրություն է գծում Ս. Գևորգի ու Ս. Թեոդորոսի միջև: Ս. Գևորգին ներկայացնող նկարներում պատկերվում է և այն աղջիկը, ում փրկում է նա, իսկ Ս. Թեոդորոսին պատկերող նկարներում ներկա է այն այրի կինը, ով զգուշացնում է վերահաս վտանգի մասին:

Ս. Թեոդորոսի երկրային կյանքի նշանակալից դրվագը եթե վիշապին սպանելն էր, ապա քրիստոնեությունը չուրանալու համար նահատակվելուց հետո նրա մեծ հրաշագործությունը կապվում է սկսված Պահքի հետ, որի համար էլ նրա հիշատակը կատարվում է Մեծ պահքի առաջին շաբաթվա շաբաթ օրը: Այս մասին նրա վկայաբանությունում պատմվում է հետևյալը: Ասվում է, որ երբ Հուլիանոս Ուրացողը գահ է բարձրանում ու սկսում քրիստոնյաներին հալածել, և տեսնելով, որ ուժով ու բռնությամբ չի կարողանում հաղթել նրանց, որոշում է դիմել հետևյալ խորամանկ միջոցին: Որպեսզի քրիստոնյաները չկարողանան պահքը պահել և ակամա մասնակցեն կուռքերին զոհաբերված կենդանիներին ուտելուն, պատվիրում է, որ սկսվող պահքի առաջին օրվանից վաճառեն միայն այն կերակուրն ու ըմպելիքները, որոնց խառնված են զոհաբերվող կենդանիների ճարպ և արյուն: Այդ նույն գիշերը Կ. Պոլսի պատրիարքին է

---

[5] *Յայսմաւուրք, Կ. Պոլիս, 1720, էջ 375:*

[6] *Նույն տեղում, էջ 376:*

երևում Ս. Թեոդորոսը և պատվիրում, որ պահքի ընթացքում «կուլիփայ կերիցեն» և բացատրում, թե ինչու: Երբ պատրիարքը հարցնում է, թե դա ի՞նչ կերակուր է, ասում է եփած ցորեն, որը սուրբը կերել էր մանկության տարիներին:

Վերահաս այս վտանգի մասին պատրիարքը հասցնում է զգուշացնել ժողովրդին, և նրանք վարվում են համաձայն Ս. Թեոդորոսի պատվերի, որի շնորհիվ Մեծ Պահքի սկսվելուց հետո հասնում են առաջին շաբաթ օրը և «մեծապայծառ տօն կատարեցին Սրբոյն Թէոդորոսի բազում ուրախութեամբ: Եւ աւանդեցին ամենայն քրիստոնէից զնոյն շաբաթ օրն հանդիսաւոր տօն առնել յամենայն եկեղեցիս ամենայն քրիստոնէից, իբր թէ շնորհակալ լինիլ սրբոյն Թէոդորոսի»[7]:

Մաշտոցի անվան Մատենադարանի № 7785 «Գանձարանում» Ս. Թեոդորոսի կանոնի գանձի հեղինակը Գևորգ Սկևռացին է: Ինչպես որ վարքում շեշտվում էր նրա գեղեցիկ ու բարեհաղթ լինելը, այնպես էլ գանձի առաջին իսկ տողում սրբի այս հատկանիշն է շեշտում Սկևռացին.

Գեղեցիկ վըկայ, զինուոր սքանչելի հաստողին բնաւից Փըրկչին Յիսուսի[8]:

Վիշապի դեմ տարած Ս. Թեոդորոսի հաղթանակը Սկևռացին ներկայացնում է և՛ որպես առարկայական և՛ որպես այլաբանական հաղթանակ.

Զվիշապն անճոռնի ճեղքեալ շեշտակի որպես Դանիէլ ի հնումն ի Բաբէլ
Եւ զաներեւոյթ աւձըն կամակոր խաչակիր վարուք իսպառ կարթեցեր:
(հ. Ա, էջ 426)

Ի հակակշիռ Հուլիանոսի նյութած դավի, ցորենից պատրաստված կերակուր ուտելու Ս. Թեոդորոսի տված պատվերի մասին Սկևռացին գրում է.

Հատիւ խարշելով շատանալ ըստ քեզ ժուժկալդ ի պահոց հանդէսս կրաւնից,
Զուրացող պղծոյն Յուլիանոսի զորոգայթաղիր մեքենայս լուծեր,
Նշան յաղթութեան մեծի կանգնեցեր ի սկիզբն պահոց Սուրբ Քառասնորդացս:
(հ. Ա, էջ 427)

Այս կանոնի Գրիգոր Խլաթեցու գանձում պահքով խորհրդանշական ձևով իրար են միանում Ս. Թեոդորոսի երկրային ու երկնային կյանքը.

Սընունդ յարգանդէ զպահսն ստացեալ, որով ըզվրէժ պահոց առեալ,
Այս փափկութեան հոգոց եղեալ, նայ դըռնապան պահոց եղեալ:

---

[7] *Յայսմաւուրք, Կ. Պոլիս, 1720, էջ 376:*

[8] *Մատենագիրք Հայոց, գիրք ԺԳ, Գանձարան, հ. Ա, աշխատասիրությամբ Վ. Դևրիկյանի, Անթիլիաս, 2008, էջ 426 (այսուհետև հատորը և էջը կնշվեն մեջբերմանը կից):*

(հ. Ա, էջ 434)

Պահքի դռնապան բնորոշմամբ նկատի ունի, որ նրանով է սկսվում Մեծ Պահքը, և պահոց շրջանում առաջինը նրա հիշատակն է կատարվում:

Հատկանշական է, որ № 4011 ձեռագրում Խլաթեցու այս գանձի տաղում ասվում է, որ Ս. Թեոդորոսը ևս Գամրաց աշխարհից էր, որով նա լրացուցիչ մի ընդհանրությամբ է կապվում Ս. Սարգսի և Ս. Գևորգի հետ:

Հուլիանոսի դավի մասին զգուշացնելը բանաստեղծական և հանգամանալից շարադրանքով լավագույնս ներկայացրել է Առաքել Բաղիշեցին.

Թէոդորոս վըկայն պանծալին, ազդումն արար ի յեկեղեցին
Եւ զխորհուրդն Յուլիանոսին յայտնեալ եցոյց Սուրբ հաւատապետին
Յաւուր պահոց մեծ քառասնեկին ըզգուշանալ ի հնարից չարին,
Մի ճաշակէք ի վաճառոցին, զխառնեալ արեամբ ճարպովըն զոհին,
Այլ կերակրիք ի ձեր սեղանին, եւ քուլիք պատրաստեցէք աղքատին,
Որով լըւեալ ըզգաստանային եւ զտաւն սըրբոյն փառաւորէին:
(հ. Ա, էջ 437–438)

Այստեղ բերված է անգամ վկայաբանության մեջ հիշատակված կերակրի՝ «Կուլիփա»-յի ժողովրդական ձևը՝ քուլիք:

Ձիավոր սրբերից չորրորդը և վերջինը, որին առանձին գանձարանային կանոն է նվիրված, Ս. Մինասն է: Նա ծածուկ քրիստոնյա էր Մաքսիմիանոսի (թգվ. 286–310 թթ.) ժամանակ և նահատակվել է IV դարի սկզբին: Վկայաբանության մեջ ասվում է, որ կայսրը նրան Ալեքսանդրիա է ուղարկում հարթելու այնտեղ ծագած մի վեճ, որը նա տեղում լուծում է: Սակայն շուտով իմացվում է, որ քրիստոնյա է, որից հետո կայսրը Ալեքսանդրիա է ուղարկում Հերմոգինես Եպարքոսին, որը Մինասից պահանջում է հրաժարվել քրիստոնեությունից: Մերժում ստանալով՝ չարաչար տանջանքների է ենթարկում և միաժամանակ դառնորեն ափսոսում, քանի որ Մինասին ճանաչում էր երկար տարիներ: Վերջինս խոշտանգումներից լիովին ապաքինված՝ հաջորդ առավոտյան երևում է Հերմոգինեսին, որը, տեսնելով այս հրաշքը, հավատքի է գալիս:

Իմանալով այս մասին՝ Մաքսիմիանոսը սաստիկ զայրանում է և անձամբ գալով Ալեքսանդրիա, պահանջում է, որ նրանք ուրանան քրիստոնեությունը: Այդժամ Մինասի Գրաբոս դպիրը, որը ևս քրիստոնյա էր, կայսրի մոտ անարգում է կուռքերին, որից զայրացած Մաքսիմիանոսը կարգադրում է տեղնուտեղը սպանել նրան, ապա նահատակում Մինասին ու Հերմոգինեսին:

Նահատակությունից առաջ Ս. Մինասն աղոթում է, որ իր մարմինը հասնի Բյուզանդիոնի (հետագայում Կ. Պոլիս) ափերը: Այնուհետև, երբ կայսրը պատվիրում է նրանց մարմինները երկաթյա արկղի մեջ դնել և ծովը նետել, Տիրոջ հրեշտակն այն տանում և հասցնում է Կ. Պոլսի ափերն ու գիշերը տեսիլում այս մասին ծանուցում Կ. Պոլսի Մետրոփանոս հայրապետին: Այնտեղ, ուր ափ էր ելել նրա մարմինը, հետագայում մի եկեղեցի են կառուցում:

Ս. Մինասի մասին պատմվող հրաշագործությունները կապվում են ծովի և որպես ձիավոր սուրբ ներկայանալու հետ: Նրա վկայաբանության հայսմավուրքային տարբերակում հիշվում է նման երեք պատմություն: Առաջինում ասվում է, որ մի մեծատուն ուխտի է գալիս նրա մարմնի ափ ելնելու տեղում կառուցված եկեղեցուն: Գիշերը իջևանում է մի պանդոկում, որպեսզի իր հետ բերած ոսկիները առավոտյան ընծայի Ս. Մինասի եկեղեցուն: Իմանալով այս մասին, պանդոկապանը գիշերը սպանում է նրան և մարմինը կտրտելով լցնում մի կողովի մեջ, որպեսզի այդպես դուրս հանի պանդոկից: Այդժամ Ս. Մինասը հասնում է ձիընթաց արշավմամբ և պատվիրում սպանվածի կտրտված մարմնի առջև աղոթել, որից հետո մարմնի մասերն իրար են միանում և սպանվածը ողջանում է: Այս հրաշքից հետո Մ. Մինասն ու նրա հետ եկած 300 ձիավորները աներևույթ են լինում:

Հաջորդ հրաշքում ասվում է, որ մի մարդ երկու սկիհ է պատրաստել տալիս, որ մեկը պահի իրեն, իսկ մյուսն ընծայի Ս. Մինասի եկեղեցուն: Տեսնելով, որ եկեղեցուն ընծայելիքն ավելի գեղեցիկ է, նա որոշում է այդ մեկն իրեն պահել և եկեղեցուն հանձնել մյուսը: Այդ ժամանակ ծովը քշում և տանում է նրա ծառային, որը ծովափ էր եկել սկիհը լվանալու: Մի քանի օր անց հայտնվում է ծառան և ասում, որ ծովի խորքում «Տեսի այր մի լուսաւոր», որը պատվիրում է իր կողքին եղողներին նրան պահել, ապա ափ հանել:

Երրորդ հրաշագործությունում պատմվում է, թե ինչպես Ս. Մինասը՝ որպես «Զիաւոր մի բարձր և ահեղ յոյժ», երևում է անարդարություն գործած մեկին ու պատվիրում արդարությամբ վարվել[9]*:*

Վտանգվածներին արագորեն օգնության հասնելու համար նա ժողովրդական մի շարք աղոթքներում հիշվում է Ս. Սարգսի հետ, ինչպես Գայլակապի այս աղոթքում.

Բոզ ձիավոր Սուրբ Սարգիսը,
Ճերմակ մորուս Սուրբ Մինասը,
Մզրախ ձեռին էկան կայնան,
Աջերը դրին մալի վրան:
Չար գազանը ակռեն սրած,
Մնացած տեղը չորցած կայնած:
Մեծն Սերոբեն թրով զարկեց,
Գիլու բերանը ճղեց պատռեց,
Տեղնուտեղը ընկավ սատկավ,
Անասուններն ազատվեցավ[10]:

Ս. Մինասին Շարակնոցում թեև առանձին կանոն նվիրված չէ, սակայն «Կանոն Սրբոց հայրապետացն» կանոնի ներքո նա Գրաբոսի և Հերմոգինեսի

---

[9] *Յայսմաւուրք, Կ. Պոլիս, 1720, էջ 334 - 335:*

[10] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ հմայական և ժողովրդական աղոթքները, Երևան, 2006, էջ 150:*

հետ հիշվում է «Շարական Սրբոյն Մինասայ, Երմոգինեայ և Գրաբոսի»[11] խորագրի ներքո: Այս շարականում հույսով իրեն դիմողներին Ս. Մինասը ներկայանում է որպես արագահաս մի օգնական.

Ով սուրբ վրկայ Քրիստոսի՝ քաղցրաբարբառող Մինաս,
Արագահաս օգնական յուսով ըզքեզ խնդրողացս:

Նույն ձևով Շարակնոցի կանոնին մաս չկազմած շարականներից մեկում է ասվում.

Պսակ և փառք պարծանաց եկեղեցւոյ Քրիստոսի
Մեծդ ի վկայս Սուրբ Մինաս, արագահաս օգնական [12]:

Ինչպես վկայաբանությունում, այնպես էլ գանձարանային կանոնում Ս. Մինասը հիշվում է Հերմոգինեսի և Գրաբոսի հետ: Այս կանոնի գանձը կա հին գանձարաններից -7785 և 79 ձեռագրերում և ունի «Մովսէսի տես» ծայրակապը: Այս գանձի հին ու նախախլաթեցիական շրջանին պատկանելն է վկայում և խորագրում գանձի փոխարեն քարոզ գրված լինելը՝ «Քարոզ Մինասա, Երմոգինէ եւ Գրաբոսի»[13]:

Ս. Մինասի զինավոր սրբերի դասին պատկանելն այս գանձում ակնարկվում է զինվոր բառի և զ -ի քանիցս կիրառմամբ հետևյալ տողում.

Քաջ նահատակ եւ զինուոր զաւրեղ գոլ զինուորեալ փրկչին Յիսուսի
(հ. Բ, էջ 1417)

Ինչպես որ Ս. Մինասի հրաշագործությունները կապվում են ծովի հետ, իսկ ծովային տարերքն էլ ծովը ալեկոծող քամիների հետ, այնպես էլ այս գանձում է ասվում.

Սուրբըդ Մինաս հանգիստ նաւելոց,
Յորջորջմամբ անուանի սաստկագին հողմոց բըռնութեան:
(հ. Բ, էջ 1417)

Ս. Սարգսի պաշտամունքը ներառել է նաև հողմի ոգու տիրակալի հետ կապվածության հավատալիքը և այստեղ հողմերի վրա Ս. Մինասի ունեցած իշխանության հիշատակումը ևս մի զուգահեռ է գծում Ս. Սարգսի հետ:

Մեծահարուստի մարմնի անդամահատումը և հրաշքով կենդանանալն է ակնարկված այս գանձի հետևյալ տողերում.

---

[11] *Շարական, Վաղարշապատ, 1888, էջ 132:*

[12] *Ս ա հ ա կ վ ր դ. Ա մ ա տ ո ւ ն ի. նշվ. աշխ., էջ 157:*

[13] *Մատենագիրք Հայոց, գիրք ԺԳ, Գանձարան, հ. Բ, աշխատասիրությամբ Վ. Դևրիկյանի, Անթիլիաս, 2008, էջ 1417 (այսուհետև հատորը և էջը կնշվեն մեջբերմանը կից):*

Զառհաւատչեայ վերնոյ յարութեանն, յայժմուս ցուցեալ մենամարտութեան,
Կատարեալ կըրկին անդամաւք, յաւէտ երեւեալ ի հրաշ հիացման
... Նորոգապէս յետ խողխողանաց, երեւեալ սքանչելի հրաշից ճոխութեամբ:
(հ. Բ, էջ 1417)

Այստեղ այն միտքն է շեշտվում, որ նրա անդամահատված մարմնի վերստին ամբողջանալը խորհրդանշում է հարություն առնելը:

Այս գանձի տաղում հոգևոր խորհուրդ է հաղորդվում այն իրողությանը, որ իրար հետ նահատակված Մինասը, Երմոգինեն և Գրաբոսը թվով երեքն էին, որով և Սուրբ Երրորդությունն է ակնարկում.

Եւ եռամասնեա մասունք մարմնոյ հոգւոյս
Այժմ ընդ երրակի մեծ վըկայսն սուրբ,
Խորհրդականք գոլ ըստ անձանց թըւոյ:
(հ. Բ, էջ 1420)

Չիավոր այս սրբերից վերջինը Ս. Մերկերիոսն է, որին թեև գանձարանային առանձին կանոն նվիրված չէ, սակայն հիշվում է Ս. Սարգսին և Բարսեղ Կեսարացուն նվիրված գործերում: Նաև՝ Գրիգոր Խլաթեցին մի առանձին գանձ է նվիրել Ս. Թեոդորոսին ու Ս. Մերկերիոսին: Այս սրբերին համատեղ մի գանձ նվիրելը պայմանավորված է այն հանգամանքով, որ Ս. Թեոդորոսը Մեծ Պահքի առաջին կիրակիին ի չիք դարձրեց Պահքը լուծելու և կուռքերին մատուցվող զոհերին քրիստոնյաների ակամա մասնակցության Հուլիանոսի ծրագիրը, իսկ Ս. Մերկերիոսը, ելնելով իր վկայարանից, Տիրամոր պատվերով գնաց ու սատակեց Հուլիանոս Ուրացողին: Վկայաբանության մեջ նշվում է, թե նա սկյութացի էր, քրիստոնյա ծնողների զավակ՝ Դեկոսի և Վաղերիանոսի կայսրերի ժամանակ: Լինելով զորավար կայսերական բանակում՝ մի ճակատամարտից առաջ տեսիլ է տեսնում, ուր Տիրոջ հրեշտակը վանում է նրա թերահավատությունն առաջիկա մարտից առաջ: Նա սուսեր է նվիրում սրբին և ասում, թե դրանով կհաղթես: Այդ ժամանակ Ս. Մերկերիոսը 27 տարեկան էր, և ինչպես վկայաբանությունում է ասվում, «Անձամբն վայելուչ և տեսլեամբն գեղեցիկ», նաև «քաջ ու արի ի պատերազմի»: Այդ ճակատամարտում տարած հաղթանակից հետո նրա զորաջոկատի բոլոր զինվորները քրիստոնյա են դառնում, ինչն իմանալով, իր առավել բարձրաստիճան հրամանատարը զորք է ուղարկում և ողջ զորաջոկատին նահատակում՝ կիրճով անցնելու ժամանակ: Հավաքական այս նահատակությունը տեղի է ունենում 300 թվականին:

Ինչ վերաբերում է Ս. Մինասի՝ Հուլիանոսին սպանելու պատմությանը, այս նույն վկայաբանությունում ասվում է, որ Բարսեղ Կեսարացին տեսիլ է տեսնում, որում Տիրամայրն ասում է՝ կանչեցեք Մերկերիոսին, որ գնա ու սպանի Հուլիանոսին, ով ուրացավ իմ Որդուն: Բասիլիոսը (Ս. Բարսեղը) արթնանալով գնում է սրբի տապանը և այնտեղ չի գտնում նրա ոչ մասունքները, և «ոչ զզէնս

նորա, որ կայր կախեալ ի վերա տապանին իւրոյ»: Բարսեղ հայրապետն ավետիս է տալիս, որ Ս. Մերկերիոսը գնացել է ուրացողին սպանելու. «Եւ ետ երից ժամուց դարձաւ սուրբ հայրապետն և եգիտ զմարմին սրբոյն ի տապանին և զզէնսն յիւրում տեղին որպէս և էրն յառաջագոյն»: Այս պատմության վերջում ասվում է, որ Հուլիանոսը ևս տեսնում է, թե ինչպես է Մերկերիոսը գեղարդը մխրճում նրա կողը. «Այլն ինքն Յուլիանոս ետես զսուրբն Մերկիւռիոս, որ եհար զգեղարդն ի կողս նորա»[14] :

Հուլիանոսին սպանելու այս պատմությունը հիշվում է ոչ միայն Ս. Մերկերիոսին, այլև Բարսեղ Կեսարացուն նվիրված գործերում: Այսպես՝ Բարսեղ Կեսարացուն նվիրված և Շարակնոցի կանոնում տեղ չգտած մի շարականում ասվում է, որ Տիրամայրը «Բասիլի երևեալ հրաման տայր խոցոտել չարին բռնաւորի զինուն Մերկեռիի»[15]:

Այս պատմությունը նույն ձևով հիշվում է Բարսեղ Կեսարացու գանձարանային կանոնի տաղի փոխում.

Վանիչ ներհակին Յուլիանէ չարին,
Մեռկեռիոսի սուրբ զինուորին սուսերբ,
Առեալ զմաղթելին յամէնաւրհնեալ կուսէն,
Սատակեալ չարին ի պարսկական մարտին:
(հ. Բ, էջ 1521)

Հուլիանոսի՝ Պարսկաստանի դեմ կռվի մեկնած ժամանակ երկնային ազդմամբ սպանվելու մասին թեև անորոշ, սակայն առաջին ակնարկը գտնում ենք Խորենացու մոտ. «Յետ այսր ամենայնի ամբարիշտն Յուլիանոս ըստ արժանի խորհրդոցն վէր ընկալեալ ի փորոտիսն՝ սատակի ի Պարսս»[16]:

Ս. Թեոդորոսին և Ս. Մերկերիոսին նվիրված գանձը, որի հեղինակը Գրիգոր Խլաթեցին է, ունի հետևյալ վերնագիրը՝ «Գանձ Սրբոց Զաւրավարացն Թէոդորոսի եւ Մեռկեռիոսի»[17]: Գանձը կարևորվում է նրանով, որ այստեղ հստակորեն կա զինավոր սրբեր արտահայտությունը.

Զինաւորաց սրբոց գնդի, բարի գործովն պտղալի:

Թե ինչո՞ւ է այս գանձը նվիրված հիշյալ ձիավոր սրբերին, երևում է հետևյալ տողերից.

Զ Յուլիանոս անաւթ չարին, Մերկիւռիոս եհար ուժգին,
Յառաջագոյն Թէոդորոս, խայտառակեալ ըզդաւ չարին,

---

[14] *Յայսմաւուրք, Կ. Պոլիս, 1720, էջ 212:*

[15] *Ս ա հ ա կ վ ր դ. Ա մ ա տ ո ւ ն ի. նշվ. աշխ., էջ 123:*

[16] *Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի. Պատմութիւն հայոց, Տփղիս, 1913, էջ 275:*

[17] *Մատենագիրք Հայոց, գիրք ԺԳ, Գանձարան, հ. Ա, էջ 433: Այս գանձը տե՛ս նաև՝ Երևանի Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 4011, թ. 103բ - 105բ:*

Որով կամէր ապականել զսրբութիւն Մեծ Պահոցին:

Նման մեկնաբանությամբ ասվում է, որ Հուլիանոսին հարվածեց ու սպանեց Ս. Մերկերիոսը, և մինչ այդ նրա դավը ի չիք էր դարձրել Ս. Թեոդորոսը Մեծ Պահքի սկզբում:

Տիրամոր պատվերով Ս. Մերկերիոսի՝ Հուլիանոսին սպանելու մասին հիշվում է և այս կանոնի մեղեդիում.

Տիրամայր Կոյսդ Մարիամ,
Զգնեալս արեան Որդոյ քո խնամարկելով,
Իշխանական ահեղ հրամանաւ առաքեալ ըզՄերկեռիոս,
Խոցեալ եսպան զամբարիշտն ըզՅուլիանոս:
(հ. Ա, էջ 435)

Ս. Թեոդորոսին և Ս. Մերկերիոսին միասին հիշելու երկրորդ կարևոր պատճառն այն է, որ համանման մի պատմություն պատմվում է Ս. Սարգսի հետ համատեղ և Ս. Թեոդորոսի մասին, կապված Վաղեսին սպանելու հետ: Դրա առաջին հիշատակությունը գտնում ենք Բուզանդի պատմությունում, ուր նշվում է, որ Ս. Թեկղիի վկայարանում Վաղեսի սպանվելու նախորդ օրը հավաքվում են մի խումբ նահատակներ, որոնց դիմավորելով՝ սրբուհի կույս նահատակ Թեկղին ասում է, որ Տիրոջ գործի մշակները հալածվում են Վաղեսի կողմից, ուստի հարկավոր է մեզնից երկու հոգու ուղարկել նրան սպանելու: Առաջարկում է, որ գնան Ս. Սարգիսը և Ս. Թեոդորոսը ու հաջորդ օրը նույն ժամին գան և պատմեն, թե ինչ են արել: Հաջորդ օրը գալով՝ ի պատասխան այն հարցին, թե ինչ արեցին, ասում են. «Յորժամ ի ձէնջ գնացաք, սպանաք զթշնամին ճշմարտութեանն զՎաղէս. և ի սոյն ժամ առ ձեզ դարձեալ եկեալ եմք»[18]:

Այս պատմությունը ոչ միայն մի ընդհանրություն է գծում Ս. Մերկերիոսի հետ, քանի որ նույն ձևով և Ս. Թեոդորոսն է սպանում Վաղեսին, այլև ուրացող կայսրերի սպանությանը մասնակից է դարձնում Ս. Սարգսին:

Խլաթեցու հիշյալ գանձի հորդորակում ևս հիշվում է այս պատմությունը և Ս. Թեոդորոսի համար ասվում է.

Որ զաւրացեալ Քեւ հոգէպէս, անփակ, արագ հրեշտակապէս,
Ըզխռովարարն եկեղեցոյ, ըզգայապէս եհար յազդոյ:
(հ. Ա, էջ 436)

Այսպիսով՝ Ս. Թեոդորոսը Քրիստոսով զորացյալ, հրեշտակի նման գնաց և խոցեց եկեղեցու խռովարար ու արիոսականներին հարած Հուլիանոսին:

Հայկական ու Ընդհանրական եկեղեցու ձիավոր և զինավոր սրբերի մի յուրօրինակ շարք ենք գտնում Ս. Սարգսին նվիրված գանձի հետևյալ տողերում.

[18] *Փ ա վ ս տ ո ս Բ ո ւ զ ա ն դ. Պատմութիւն հայոց, Երևան, 1987, էջ 162:*

Ի տաւնս քո առաւել ցընծան դասք հրեշտակաց եւ սուրբք ամենայն,
Եւս առաւել գունդք զինուորական, մարտիրոսացն, որք պըսակեցան,
Միւռկիւռիոս սուրբ նավավըկայն, Գէորգէոսըն քաջ զաւրական,
Թէոդորոսքն երկուց յաղթանդամ, Անդրէ զաւրավարն եւ Անանիայն,
Մամիկոնեան դասքըն և ցընծան քաջըն Մուշեղ և Սուրբըն Վարդան,
Տաճատ, Արսէն, Արտակ եւ Վահան, Խորէն, Հըմայակ, Ատոմ Գընունեան,
Եւ Գարեգին նախկին ախոյեան, Սուրբ Յակովիկ բազմահատ վըկայն,
Սահակ, Համազասպ, Վահանն Գողթան եւ այլ բազումք, որ վըկաեցան,
Սոքա համայն քեւ իսկ զաւրացան, սուրբ Սարգիս գերեաց գերէհան:
(հ. Ա, էջ 332-333):

Ձիավոր այս սրբերի թե՛ Հայոց և թե՛ Բյուզանդական եկեղեցիներում պատերազմի ժամանակ որպես բարեխոս հանդես գալու մասին հ. Մ. Ավգերյանը գրում է. «Որպէս ազգ մեր յաւուրս իշխանութեան իւրոյ ի պատերազմունս բարեխօս և պաշտպան ունէր զսուրբ զօրավարս զՍուրբ Գէորգ, զՍուրբ Մինաս, զՍուրբ Սարգիս և զՍուրբ Թէոդորոս ընդ Սրբոց Վարդանանց և Ատոմմանց, նոյնպէս և յոյնք զնոյն Սուրբ Գէորգ, զՍուրբն Թէոդորոս, զՍուրբն Մաւրիտիոս և զՍուրբն Դեմետրիոս»[19]:

КАНОНЫ О ВСАДНИКАХ-СВЯТЫХ В ГАНДЗАРАНАХ

ВАРДАН ДЕВРИКЯН

Р е з ю м е

В Святцах армянской церкви и в народном культе особое место занимает группа святых, которых принято называть всадниками - святыми. Их пятеро и все они византийского происхождения. Из них Св. Саркис приобрел полностью национальный характер и воспринимается как скоропоспевающий, помогающий всем хранитель. Культ Св. Георгия принят у всех христианских народов. Св. Теодор как и Св. Георгий считается змееборцем, Св. Минас является всадником-святым, который спешит на помощь терпящим бедствие на море. Св. Меркерий убивает Юлиана Отрекающегося. Как показывают средневековые литературные первоисточники, эти всадники - святые в армянской и в византийских церквах выступают во время войн как заступники, ходатаи и быстродействующие помощники попавших в беду. Подобное восприятие нашло

[19] *Հ. Մ. Ա ւ գ ե ր ե ա ն. Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, Վենետիկ, 1813, էջ 213:*

свое выражение в канонах гандзаранов (сборниках армянских средневековых праздничных песнопений).

CANONS DEVOTED TO THE WARRIOR SAINTS IN GANDZARANS

VARDAN DEVRIKYAN

S u m m a r y

In Armenian Church Calendar and national cult worships a special place occupies the group of Warrior Saints. There are five of them and all are of Byzantine origin. The cult of one of these saints – St. Sargis (also Sergius) assumed a national character among Armenian people and is perceived a defender, immediately coming to help everybody. The cult of St. George is spread among all Christian nations. St. Theodoros like St. George is considered a dragon-killer, St. Minas (also Menas) helps people endangered in the sea and St. Mercurius kills Julian the Apostate. As medieval literature sources show, during the wars these Warrior Saints are perceived intercessors and helpers both by Armenian and Byzantine Churches. And this fact has widely been expressed in the canons of Gandzarans (Armenian medieval collections of Gandzes – festive songs).